ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԷՐԵԲՈՒՆԻ Ն.
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԷՐԵԲՈՒՆԻ, ԽՈՐԵՆԱՑՈՒ Փ., մասնաշենք 162Ա)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/2697/02/24 ք. Երևան
4 Օգոստոսի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը (այսուհետ՝ դատարան), նախագահությամբ դատավոր Դանիել Միսեյանի, քննության առնելով թիվ ԵԴ2/2697/02/24 քաղաքացիկան գործով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑ

Հայցվորը 09.04.2024 թվականին էլեկտրոնային համակարգի (այսուհետ նաև՝ Համակարգ) միջոցով հայցադիմում է ներկայացրել Դատարան ընդդեմ Պատասխանողի՝ թիվ «ԵՔԼ-ԲՄԱԾՁԲ-24/1» ընթացակարգի ծածկագրով մեկ փուլով բաց մրցույթի հայտարարությունը (իրավերը) անվավեր ճանաչելու, պատասխանողին միևնույն ընթացակարգով նոր մրցույթ հայտարարելուն պարտավորեցնելու և որպես հետևանք իրավերում օրենքին համապատասխան գնման առարկայի բնութագիրը հստակ սահմանելու պահանջների մասին (քաղաքացիական գործ՝ թիվ ԵԴ2/2697/02/24):

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Թ. Ղուկասյան) 16.04.2024 թվականի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է և սահմանվել է եռօրյա ժամկետ հայցադիմումի թերությունները շտկելու և այն կրկին ներկայացնելու համար:
Հայցադիմումը ներկայացվել է կրկին Համակարգի միջոցով 19.04.2024 թվականին, որը բաշխվել է նույն դատարանի դատավոր Ա. Հովհաննիսյանին:
Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր՝ Ա. Հովհաննիսյան) 26.04.2024 թվականի որոշմամբ կրկին ներկայացված հայցադիմումը վերադարձվել է:

Միաժամանակ նշվել է, որ կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում:
01.05.2024 թվականին Հայցվորի ներկայացուցիչ Մերի Լևոնի Արտաշեսյանի կողմից ընդդեմ Պատասխանողի հայցադիմում է ներկայացվել դատարան՝ թիվ «ԵՔԼ-ԲՄԱԾՁԲ-24/1» ընթացակարգի ծածկագրով մեկ փուլով բաց մրցույթի հայտարարությունն (հրավերն) անվավեր ճանաչելու և որպես հետևանք պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարությունն անվավեր ճանաչելու պահանջների վերաբերյալ:
02.05.2024 թվականին Մերի Լևոնի Արտաշեսյանի կողմից ներկայացված հայցադիմումը բաշխվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Սաֆարյանին, իսկ դատավորի աշխատակազմին հասանելի է դարձել 03.05.2024 թվականին:
Դատարանը (դատավոր՝ Ա. Սաֆարյան) 08.05.2024թ.-ին կայացրել է որոշում հայցադիմումը վերադարձնելու մասին՝ արձանագրելով, որ այն հանդիսանում է նոր ներկայացված հայցադիմում:
Հայցվորը՝ ի դեմս ներկայացուցիչ Ցողիկ Մուրադյանի 26.07.2024թ.-ին կրկին է ներկայացրել հայցադիմումը, ինչպես նաև միջնորդություն ՔԴՕ 127-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եռօրյա ժամկետը վերականգնելու մասով՝ հետևյալ հիմնավորմամբ.
««ԷՅԱՅ ՍՓԵՅՍ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ նաեւ Ընկերություն) 2024 թվականի ապրիլի 9- ին քաղաքացիական դատավարության էլեկտրոնային համակարգի՝ «cabinet.armlex.am» կայքի (այսուհետ՝ նաեւ Համակարգ) միջոցով ներկայացրել է հայցադիմում Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ նաեւ Դատարան)՝ ընդդեմ «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲ ընկերության:
Հայցադիմումը վերադարձվել է 2024 թվականի ապրիլի 16-ին, կրկին ներկայացվել է 2024 թվականի ապրիլի 19-ին, վերադարձվել է 2024 թվականի ապրիլի 26-ին: Հայցադիմումը կրկին ներկայացվել է 2024 թվականի մայիսի 1-ին եւ մակագրվել է դատավոր Արմինե Սաֆարյանին: 2024 թվականի մայիսի 16-ին Համակարգի քաղ. դիմումներ-ներգրավվել որպես փաստաբան դաշտի միջոցով Ցողիկ Մուրադյանը ներկայացրել է դիմում (այսուհետ նաեւ Դիմում) թիվ ԵԴ2/2697/02/24 քաղաքացիական գործով հայցվոր «ԷՅԱՅ ՍՓԵՅՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ներգրավվելու վերաբերյալ, քանի որ Համակարգում որպես «ԷՅԱՅ ՍՓԵՅՍ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ ներգրավված Մերի Արտաշեսյանի լիազորությունները դադարեցված են եղել: Մերի Արտաշեսյանի լիազորությունների փաստացի դադարեցման պայմաններում Համակարգում առկա հնարավոր գործողությունների ցանկում առկա չէ որեւէ գործողություն, որը հնարավորություն է տալիս նրան հրաժարվել ներկայացուցչությունից, որպիսի պայմաններում Համակարգում Մերի Արտաշեսյանը շարունակում է մնալ Ընկերության ներկայացուցիչը: Ց. Մուրադյանի կողմից Դիմումը ներկայացնելուց հետո՝ 2024 թվականի մայիսի 31-ին, «datalex.am» դատական տեղեկատվական համակարգում ավելացվել է նշում, որ
Դատարանի 2024 թվականի մայիսի 8-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է: Այսինքն՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը կայացվել է հետին թվով՝ Ց.Մուրադյանի կողմից որպես փաստաբան ներգրավվելու դիմումը ներկայացնելուց եւ
Դատարանին հասանելի դառնալուց օրեր անց Սույն դիմումը ներկայացնելու օրվա դրությամբ Դատարանը՝ ի դեմս դատավոր Ա. Սաֆարյանի, դեռեւս չի արձագանքել դիմումին՝ հակառակ այն հանգամանքին, որ դիմումը ներկայացնելու պահից այն համարվում է Դատարանում ստացված եւ հասանելի: Որպես փաստաբան ներրավվելու վերաբերյալ դիմումը ներկայացնելու պահից Ընկերության ներկայացուցչի՝ Ց.

Մուրադյանի կողմից 2024 թվականի մայիսի 16-ից մինչեւ սույն դիմումը ներկայացնելու օրը բազմաթիվ հեռախոսազանգեր են կատարվել դատավոր Ա. Սաֆարյանի աշխատակազմ: Ի պատասխան հեռախոսազանգերի՝ աշխատակազմից պատասխանել են, որ էլեկտրոնային գործերը վարվում են բացառապես դատավորի կողմից եւ բացառապես դատավորը կարող է բավարարել կամ մերժել Ընկերության Դիմումը: Աշխատակազմից պատասխանել են, որ դատավորը նիստի է, կամ տեղում չէ, կամ ծանրաբեռնված է, կամ իրենք հետ կզանգահարեն, կամ կարձագանքեն դիմումին, կամ առհասարակ հեռախոսազանգերին չեն պատասխանել: Նման պայմաններում Ց. Մուրադյանի կողմից բազմաթիվ զանգեր են կատարվել նաեւ Masys Information_ Systems-ի աշխատակիցներին, ովքեր սպասարկում են «cabinet.armlex.am» կայքը: Ի պատասխան զանգերի՝ ներկայացուցչին հայտնել են, որ
իրենք կկապնվեն Դատարանի աշխատակազմի հետ, կճշտեն, կուղղեն, հետ կզանգահարեն: Հետ չզանգահարելու պայմաններում ներկայացուցչիը կրկին կապ է հաստատել աշխատակիցների հետ, ովքեր հայտնել են, որ կապնվել են եւ Սաֆարյանի
աշխատակազմի հետ եւ նրանց մոտ առկա է Ց. Մուրադյանի դիմումը հաստատելու տեխնիկական հնարավորությունը: Դրանից հետո ներկայացուցիչը կրկին կապ է հաստատել Դատարանի հետ, սակայն նրան կրկին հայտնել են, որ նման դաշտ իրենց մոտ
բացակայում է: Ներկայացուցիչը կրկին կապ է հաստատել Համակարգը սպասարկող աշխատակիցների հետ, ովքեր միայն 10-ից ավելի զանգեր կատարելուց հետո տեղեկացրել են, որ հնարավոր է մուտք գործել Ընկերության տնօրենի նույնականացման քարտի միջոցով եւ հայցադիմումը ներկայացնել կրկին: Սակայն Ընկերության տնօրենի նույնականացման քարտի միջոցով մուտք գործելու պայմաններում քաղաքացիական գործը Համակարգում առկա չի եղել, հետեւաբար բացակայել է նաեւ հայցադիմումը տվյալ գործի
շրջանակներում կրկին ներկայացնելու հնարավորությունը: Արդյունքում՝ Դիմումը ներկայացնելու պահից՝ 2024 թվականի մայիսի 16-ից անցել է մեկ ամսից ավելի, սակայն Ընկերությանն այդպես էլ հնարավորություն չի տրվել հայցադիմումը կրկին ներկայացնել:
2024 թվականի հունիսի 13-ին Ընկերության ներկայացուցիչ Ց Մուրադյանը դիմում է ներկայացրել նաեւ Դատարանի նախագահին, սակայն կրկին որեւէ արձագանք չի ստացվել: Ցողիկ Մուրադյանին հասանելիություն տրվել է միայն 2024 թվականի հուլիսի 24-ին:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Հայցադիմումի թերությունները վերացնելու համար առաջին ատյանի դատարանը տրամադրում է եռօրյա ժամկետ՝ սկսած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումն ստանալու պահից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 2-րդ, 6-րդ, 7-րդ, 10-12-րդ և 14-րդ կետերով սահմանված դեպքերի: Եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը: Կրկին ներկայացված հայցադիմումում նույն խախտումները վերացնելու համար նոր ժամկետ չի տրվում, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ խախտումները վերացնելու հնարավորությունից հայցվորը զրկված էր իր կամքից անկախ պատճառներով:»
Դատարանը քննության առնելով միջնորդությունը, գտնում է, որ այն անհիմն է և ենթակա է մերժման, քանի որ համաձայն էլեկտրոնային համակարգում առկա տեղեկատվության Դատարանը կայացրել է վերադարձման որոշում և պատշաճ՝ գնումների հետ կապված վեճերի քննության կարգին համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցել է

Ընկերությանը, որի կողմից հայցադիմումը կրկին ներկայացնելու հնարավորությունը սահմանափակված լինելու վերաբերյալ փաստական հիմքեր չեն ներկայացվել: Այն հանգամանքը, որ Ընկերությունը ուշացումով ներգրավել է փաստաբանի, որն իր հերթին կատարել է գործողություններ՝ նյութերին ծանոթանալու ուղղությամբ, որևէ կերպ չեն բացառում Ընկերության կողմից գործին հասանելիության (նշվածը առնչությամբ էական է, որ համաձայն էլեկտրոնային համակարգի՝ ընկերությունն ունի հասանելիություն) և գործողությունների կատարման հնարավորությունները՝ հաշվի առնելով նաև գործի վարումը էլեկտրոնային եղանակով, ընդ որում Ընկերությունն է կրում իր կողմից ընտրված ներկայացուցչի ոչ պատշաճ գործողությունների իրավական հետևանքները:
Անդրադառնալով հայցադիմումը վարույթ ընդունելու հարցին, Դատարանը գտնում է, որ բացակայում են հայցադիմումը վերադարձնելու և հայցադիմումի ընդունումը մերժելու հիմքերը, որպիսի պարագայում այն ենթակա է վարույթ ընդունման:
Դատարանն արձանագրում է, որ սույն վեճը քննության է ենթակա ՔԴՕ 27.2 գլխով սահմանված հատուկ հայցային վարույթի կարգով, որպիսի պարագայում՝ հիմք ընդունելով ՔԴՕ 234.6-րդ հոդվածը, անհրաժեշտ է պատասխանող «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲ ընկերությունից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-200-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑ

1. Հայցադիմումը կրկին ներկայացնելու դատավարական ժամկետի բաց թողումը հարգելի համարելու միջնորդությունը մերժել և հայցադիմումը գնահատել որպես նոր նեկայացված: Հայցադիմումն ընդունել վարույթ:
2. Պատասխանող «ԵՐՔԱՂԼՈՒՅՍ» ՓԲ ընկերությունից պահանջել գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
3. Պարզաբանել կողմերին, որ՝
- ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումն ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում, և այդ ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:
- վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը.
- պատասխանողը վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացնել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառ-ներով:
- Հայցադիմումի պատասխանը կամ հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը ներկայացվում է հայցադիմումը վարույթ ընդունելու մասին որոշումն

ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
- գործը դատական նիստում քննելու վերաբերյալ միջնորդությունը գործին մասնակցող անձը կարող է ներկայացնել մինչև հայցադիմումի պատասխան ներկայացնելու համար սահմանված ժամկետի լրանալը:
- քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11 հոդվածի համաձայն՝ պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:
4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 13.09.2024 թ.-ին՝ դատական պաշտոնական կայքի միջոցով:
5. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Դանիել Մխեյան

Digitally signed by MKHEYAN DANIEL 2908790114
Date: 2024.08.04 11:10:55 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am